ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ - ԽՈՐՀՐԴԱՊԱՇՏԱԿԱՆ ԸՄԲՌՆՈՒՄՆԵՐԸ ՎԱՂ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Գոհար Սարգսյան

Երկրածնության մոնիստական ըմբռնումով, տիեզերքի միասնության և թվերի մոգության մասին ուսմունքով, ճգնակեցության նկատմամբ ունեցած հակումներով և օրփեոսյան-պյութագորական միստերիաներով՝ վաղ քրիստոնեության վրա անուրանալի ազդեցություն է ունեցել նորպյութագորականությունը: Այդ եզրակացության օգտին են վկայում փիլիսոփայական դպրոցի կողմից առաջադրված «անմահ հոգու», իրականության էական տարրերի (թվերի), ինչպես նաև՝ տիեզերածնական ու խորհրդապաշտական հայեցակարգերը: Հանրաճանաչ է, որ նորպյութագորականության գոյաբանությունը հանդիսանում է պլատոնականության, ինչպես նաև դարաշրջանի գիտակցության մեջ թափանցած Լիցեյի և ստոիկության հիմնարար սկզբունքների էկլեկտիկական միավորումը, որը շաղկապված էր միաստվածության յուրատիպ ըմբռնման հետ[1]:

Կրոնագիտական վերլուծությունը թույլ է տալիս պնդել, որ կանոնական գրականության և ձևավորված աստվածաբանության բացակայության պայմաններում քրիստոնեական աշխարհայացքի ձևավորման վրա անջնջելիհետք է թողել Աստծու, որպես **«զուտ» հոգևոր սկիզբ** և բացարձակ բարի էություն լինելու նորպյութագորական ըմբռնումը: Նույնը պետք է ասել նաև աշխարհ-Աստված փոխհարաբերության նորպյութագորական լուծումների մասին, քանի որ դպրոցի որոշ ներկայացուցիչներ պլատոնական և արիստոտելյան ըմբռնումների հետևությամբ կեցությունից և մտքից վեր կանգնած՝ Աստծուն տարանջատում էին աշխարհից, իսկ մյուսներն Աստծուն համարում էին աշխարհի էության մեջ ամբողջովին ներթափանցած հոգի և «ջերմություն», որը նույնացնում էին իդեաների (թվերի) հետ:

Նորպյութագորականների կողմից աշխարհի հիմքը համարվող թիվը (թվային գումարը) նույնացվում է Աստծու հետ և մեկնաբանվում որպես

---

[1] Տե՛ս **Асмус Ф. В.** Античная философия, с. 503; **Философская энциклопедия,** Т. 4, М., 1967, с. 45; **Поснов М. Э.** Гностицизм II века о победа Христианской Церкви над ним, с. 58-59.

«նախնական միտք», «բոլոր իրերի հիմք», «մատերիայի և ձևի յուրահատուկ միացում»: Իսկ ստոիկների հետևությամբ նրանք Ա**ստծուն նույնացնում էին «միասնական էության»** կամ **մոնադի հետ,** որից բխեցնում էին մնացյալ բոլոր թվերը (իդեաները): Կրոնագիտական վերլուծությունը թույլ է տալիս փաստել նաև արարչագործության վաղ քրիստոնեական ըմբռնումների վրա ուղղության ունեցած ազդեցությունը: Այսպես, անդրադառնալով աշխարհակառույցի փիլիսոփայական մեկնաբանությանը, նորպյութագորականներն առաջադրում էին **«անհամադրելի չորս սկիզբների»՝** անմարմին **ձևի** (թվերի), **մատերիայի,** աշխարհում գոյություն ունեցող **բարու և կարգի** ու **համաշխարհային չարի** ուսմունքը[1]: Ի**րական գոյ համարելով միայն Աստծուն՝** մետաֆիզիկական «1» թվին, նորպյութագորականները «1» որակում էին որպես կեցության սկիզբ և բարիք, «անփոփոխ ու հավիտենական նախապատկեր»: Հոգևոր էություն լինելով՝ «1»-ը բարձր էր նյութական աշխարհից, հակադիր էր նրան և մտքի կողմից կարող էր ընկալվել միայն բացասական նշանակությամբ՝ որպես ուժ: Այստեղից էլ նրանց այն պնդումը, թե Աստված «անպայման եզակիություն» է և այն ուժը, որը մատերիայից արարում է աշխարհ, ուստի՝ ա**րարչագործ** հոգևոր սկիզբ է:

Քրիստոնեական աստվածաբանության աշխարհընկալումների ձևավորման գործում մեծ ազդեցություն է ունեցել նաև աստվածային էությանը հակադիր մատերիական սկզբի, («անորոշ 2-ի») նորպյութագորական ըմբռնումը: «1»-ի և «անորոշ 2»-ի հակադրությունը ներկայացնելով ոգու և մատերիայի, ձևի և նյութի, ակտիվ և պասիվ սկիզբների, կատարյալի և անկատարության հակադրության տեսքով, մատերիան որակվում է որպես **ոչ էական սկիզբ,** անկատարության, անկարգության և փոփոխական կեցության ակունք: Եվ քանի որ Աստված «արարիչ է և առաջնաշարժիչ», ապա մատերիան որոշակի ձև և էություն է ստանում բացառապես «մետաֆիզիկական «1»-ի շնորհիվ: Այստեղից էլ քրիստոնեության համար էական այն եզրահանգումը, թե «Աստված է կարգավորում մատերիան» և նրան ձև հաղորդելով՝ արարում է աշխարհի բազմազանությունն ու որոշակիությունը[2]:

Վաղ քրիստոնեական հոսանքների աշխարհընկալման վրա անուրա-

---

[1] Տե՛ս **Асмус Ф. В.** Античная философия, с. 504; **Поснов М. Э.** Гностицизм II века о победа Христианской Церкви над ним, с. 59-60.

[2] Մանրամասները տե՛ս **Асмус Ф. В.** Античная философия, с. 503-504; **Философская энциклопедия,** Т.4, М., 1967, с. 45; **Поснов М. Э.** Гностицизм II века о победа Христианской Церкви над ним, с. 60-61.

նալի է նաև Աստծու ու արարված աշխարհի միջև առկա **միջնորդավորված և չանձնավորված** (ինքնուրույն կեցություն չունեցող) «գաղափարների» զուգահեռների անցկացումը: Եվ քանի որ դպրոցը ցանկացած բազմազանության պատճառական հիմք է համարել Աստծուն, նրանից էլ բխեցվել են բոլոր միջնորդ «գաղափարները»[1]: Մի ուսմունք, որն անուրանալի ազդեցություն է ունեցել էբիոնիտական աստվածաբանության վրա: Նույնը պետք է ասել նաև նորպյութագորական **մարդաբանական** ուսմունքի մասին: Նրանում մարդը ներկայացվում է որպես վերին և ստորին տիեզերական ուժերը մարմնավորող, բայց զգայական աշխարհից վեր կանգնած յուրահատուկ «միկրոտիեզերք», որին **հայտնությունը տրվում է** մանտիկայի և միստերիաների միջոցով: Ինչ վերաբերում է մարդ-Աստված փոխհարաբերության նորպյութագորական մեկնությանը, ապա այս հարցում նրանց հայեցակարգը երկատվում է: Հետևողական մոնիզմի դիրքերից հանդես եկող նորպյութագորականների մի մասը մատերիական աշխարհի և մարդու գոյությունը բխեցնում էին **առաջնային կեցությունից՝ Աստծուց:** Իսկ **չարի հիմնահարցը** նրանք բնութագրում էին երկակի՝ որպես մատերիայից անկախ, բայց նրան բնորոշ որակ, ավելի ուշ՝ որպես աստվածային ազդեցությանը հակադրվող **մատերիական հատկություն**: Նորպյութագորականության երկրորդ հոսանքը պաշտպանելով երկվության սկզբունքը, գտնում էր, որ «նախաստեղծ կեցությունը» (Աստված) և «ֆիզիկական անորոշությունը» (մատերիա) հանդես են գալիս որպես սուբստանցիոնալ հակադիր հատկություններ: Առաջին դարավերջին աշխարհայացքային այդ լուծումներից շատերն ընկան գնոստիկյան հակաերրորդաբանության հիմքում:

Վաղ քրիստոնեական հակաերրորդաբանական հոսանքների աշխարհայացքը շատ բանով պայմանավորվել է նաև ստոիկյան փիլիսոփայության գոյաբանական, տիեզերաբանական և մարդաբանական ըմբռնումներով:

Փաստական նյութը վկայում է, որ ստոիկները գոյաբանական հարցերը քննարկել են սեռատեսակային բաժանումների դիրքերից: Ըստ սեռի այդ առանցքային հիմնահարցը քննարկվել է երեք հարթությամբ՝ աշխարհակառույցի, նախատարրերի և պատճառների ուսմունքի տեսքով: Անդրադառնալով աշխարհակառույցի հիմնահարցին, ստոիկները պնդել են, որ այն հանդես է գալիս «ամենայնի էության առանձնահատուկ հատ-

[1] Տե՛ս **Асмус Ф. В.** Античная философия, с. 504-505.

կության» որակով, որի հիմքում ընկած են երկու հիմնարար սկզբունքներ՝ գործունյա (մատերիայի բովանդակությունը կազմող Աստված, բանականություն) և տառապող (որակական որոշակիություն չունեցող էություն, մատերիա): Աշխարհակառույցը մեկ է, կենդանի և բանականությամբ օժտված էություն, որն իրենով պայմանավորում է ողջ գոյը և կառավարվում է կատարյալ հոգևոր սկզբի՝ եթերի կողմից: Աշխարհակառույցը նաև միասնական է, քանի որ հենվում է երկնքի և երկրի «համաձայնության և կապի վրա»: Իրական արարչությունն իրական է դառնում «անմարմին, անսահման ու հավերժական սկզբի» (Աստված) և ձև ունեցող ու վերջավոր նախատարրերի հարաբերակցության արդյունքում:

Ստոիկները համոզված էին, որ Աստված տիեզերական հավերժական ու ցիկլային գործընթացում գտնվող կենդանի և բանական սկիզբ է, անմահ, կատարյալ, մտահասու, չարին հավիտենապես հակադիր ինքնաբավ գոյ: Այդ հատկանիշների շնորհիվ Աստված աշխարհակարգի էությունն է, բովանդակությունը և, միաժամանակ, հիմնարար տարրը: **Աստված հոգի է,** բանականությամբ օժտված «կրակե պնևմա»: Նա ձև չունի, եթերային է, իր կամքով է կառավարում աշխարհակարգը և կարող է վերածվել այն ամենի, ինչ ուզում է: Միաժամանակ, Աստված այնպիսի որակ է, որն անբաժան է մատերիայից: Լինելով ամենայնի սկիզբը՝ «նա շարժվում է մատերիայի միջոցով» և նրան ակտիվություն է հաղորդում, որ այդպիսով արգասավորվում է և դառնում իրական բազմազանության պոտենցիալ հնարավորությունը: Մատերիա է այն ամենը, որից ծագում է ինչ-որ բան: Այն կոչվում է էություն և մատերիա: Էություն է, քանի որ նա գոյ է դառնում մարմնի տեսքով: Որպես էություն մատերիան սահմանափակ է, քանի որ փոփոխական է, ենթակա անվերջ բաժնումների և հիմք է դառնում իրերի ձևակազմության համար: Վերջավորի և առանձինի տեսքով հանդես եկող էությունն էլ կազմում է մատերիան, որից առաջ են գալիս «որակ չունեցող էությունները»՝ 4 նախատարրերը (կրակ, ջուր, օդ, հող):

Աշխարհակարգի հիմքում ընկած է հողը, որի վրա հաջորդաբար բարձրանում են ջուրը, օդը և կրակը: Աշխարհակարգի հիմնարար տարրը **բնությունն է, արարիչ կրակը,** որը հավերժորեն ձգտում է դեպի արարում, քանզի ստեղծագործ ու ակտիվ պնևմա է: Բնությունը դրսևորվում է ամենայնի էության տեսքով: Նրա յուրատիպ հատկանիշն է երկնքի ու երկրի, աստվածների, մարդկանց և իրերի, հետևաբար՝ մարմնականի ու անմարմին եթերայինի ամբողջությունը: Նա չափվում է անմար-

մին և դիսկրետ շարժմամբ, որում անցյալը և ապագան անսահման են, իսկ մարմնականի հետ սրետորեն առնչվող ներկան՝ սահմանափակ է ու վերջավոր: Մատերիական աշխարհը ստեղծված է մարդկանց համար, որոնց ընդհանուր բնակատեղին «երկնային համայնքների նախատիպ» տիեզերքն է: Մարդու նպատակն է դառնալ **բանականության տիեզերական թագավորության լիիրավ քաղաքացի** (իմաստուն): Մարդը բաղկացած է նյութական մարմնից ու «պնևմատիկ հոգուց»: Ութմասնյա կառուցվածք ունեցող հոգին զգայությունների և ընկալումների միջոցով ծնում է հասկացությունների կոմպլեքսը կամ լոգոսը, որի ազդեցությամբ հոգին աստիճանաբար վերածվում է բանական ոգու: Հոգին հավերժական չէ և անհրաժեշտաբար պետք է վերադառնա դեպի աստվածային սուբստանց՝ իր «նախնական գոյության հոսք»:

Վաղ քրիստոնեական աշխարհայացքի վրա անուրանալի է նաև առաքինության մասին ստոիկյան ուսմունքի ազդեցությունը: Քրիստոնեության համար «ստոիկյան իմաստունի» կերպարը կատարյալ առաքինության խորհրդանիշ և բարձրագույն արժեք է, որը սերտորեն կապված է մարդկանց **երկնային Հոր զավակ** լինելու (կոսմոպոլիտիզմի) և լոգոսի սահմաններին անխուսափելիորեն մերձենալու ըմբռնումների հետ: Եվ պետք է նկատել, որ ստոիկների ջատագոված կոսմոպոլիտիզմը ներդաշնակորեն համապատասխանում էր հռոմեական համաշխարհային պետության շահերին[1]:

Արարիչ Աստծու և նրան հակադրավող «աշխարհի չար ոգին» մարմնավորող մատերիայի, աստվածային բացառիկ եզակիության և նրա կողմից արարված մատերիական բազմազանութան անտինոմիան, ինչպես նաև նորպյութագորական և ստոիկյան կրոնափիլիսոփայական և խորհրդապաշտական այլ լուծումներ ազդեցիկ դեր են կատարել վաղ եկեղեցու, այդ թվում հակաերրոդաբանության (էբիոնիտներ, գնոստիկներ և այլն) դոգմատիկական պատկերացումների ձևավորման գործում: Իսկ առաքինության մասին ստոիկության ուսմունքը բացառիկ դեր է կատարել եկեղեցական իդեալ համարվող «Աստծու թագավորության» (աստվածապետության) հավատքային տեսակետը հիմնավորելու գործում:

---

[1] **Стоицизм/Антология мировой философии**. Т. 1. Философия древности и средневековья. Ч. 1, М., 1969, с. 476-503; **Асмус Ф. В.** Античная философия, с. 452-454, 459-465, 468-469, 505; История философии в кратком изложении (пер. с. Чеш. И. И. Богута), с. 172-176, 182; **Оргиш В. П.** Античная философия и происхождения христианства, с. 61, 67 -68, 93-97, 100-104 և այլն:

ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ - ԽՈՐՀՐԴԱՊԱՇՏԱԿԱՆ ԸՄԲՌՆՈՒՄՆԵՐԸ ՎԱՂ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Գոհար Սարգսյան

Բանալի բառեր՝ *փիլիսոփայություն, երկրածնություն, թիվ, հոգևոր, մոնադ, մատերիա, չար և բարի, հայտնություն, թեոգոնիա, կոսմոգոնիա*

Աշխատանքը ներկայացնում է քրիստոնեական աստվածաբանական աշխարհընկալումների ձևավորման գործում նորպյութագորականության և ստոիկյան փիլիսոփայության գոյաբանական, տիեզերաբանական և մարդաբանական պատկերացումների ազդեցությունները: Հոդվածում քննության է առնված թվերի՝ որպես աշխարհի հիմք նորպյութագորական ըմբռնումները, ինչպես նաև վաղ քրիստոնեական հակաերրորդաբանական հոսանքների վրա ստոիկյան փիլիսոփայական գաղափարների ազդեցությունը:

ФИЛОСОФСКО-МИСТИЧЕСКИЙ ЗАГОВОР В ЭПОХУ РАННЕГО ХРИСТИАНСТВА

Гоар Саргсян

Ключевые слова: *философия, формирование Мира, число, духовность, монада, субстанция, добро и зло, откровение, теогония, космогония*

Работа представляет собой влияние онтологического, универсального и антропологического положения неопутагорианцев и стоиков в формировании христианских богословских позиций и мировоззрений. В статье анализируются представления неопутагорианцев в цифрах как основа мира, а также влияние философии стоиков на ранние христианские антитринитарные течения.

PHILOSOPHICAL-MYSTICAL UNDERSTANGIN IN EARLY CHRISTIANITY ERA

Gohar Sargsyan

Key words: *philosophy, formation of the World, number, spiritual, monad, substance, good and evil, revelation, theogony, cosmogony*

The work represents the influences of ontological, universal and anthropological positions of neopyutagorians and stoics in the formation of Christian theological positions and world-views.